ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

*23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 108-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 23-ի թվով 14-րդ արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին/զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. Վայք համայնքի տարածքում գտնվող աշխարհագրական օբյեկտների անվանափոխման մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
3.Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

---

*23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 109-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով, «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 17.10.2024 թվականի թիվ ՍԹ/17048-2024 գրությունը և Վայոց ձորի մարզպետի 17.10.2024 թվականի թիվ 01/08/6626-2024 գրությունը՝ մարզի որոշ բնակավայրերի անվանափոխման վերաբերյալ,

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանակոչումների և անվանափոխումների մասնագիտական հանձնաժողովի՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Ախտա բնակավայրի անվանափոխման վերաբերյալ առաջարկությանը՝ «Ախտա»-ն դարձնելով «Աղթաբույնք», քանի որ մեծ հավանակությամբ խոսքը գնում է պատմական Աղթաբույնք գյուղի մասին, որի անունը վկայված է Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական»-ում Աղթաբոյնք անվամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.*

# ՈՐՈՇՈՒՄ N 110-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 13 արձանագրությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

1.1 Էվելինա Ռոբերտի Սաղյան՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
1.2 Նինա Կարլիտոնի Բալյան՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
ՈՍԿԱՆՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ
ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ
ՋԱՆՈՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ